ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք

12 դեկտեմբերի 2019թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Գևորգ Հովհաննիսյան
Անդամներ	Գեղամ Գևորգյան Արկադիկ Մուրադյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/26 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/26 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ավտոմեքենաների անիվների նախահաշվային գներն ըստ չափաբաժինների.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Նախահաշվային գինը
1	Ավտոմեքենաների անիվներ	60000
2	Ավտոմեքենաների անիվներ	128000
3	Ավտոմեքենաների անիվներ	100000

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ «Հ. Գրքիկյան» ՍՊԸ-ն (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տերյան 63, էլ. փոստ՝ hovsepgrqikyan@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը ըստ չափաբաժինների՝

Չափաբաժնի համարը	Անվանումը	Գնային առաջարկը
1	Ավտոմեքենաների անիվներ	54000
2	Ավտոմեքենաների անիվներ	124000
3	Ավտոմեքենաների անիվներ	96000

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Հ. Գրքիկյան» ՍՊԸ-ին:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Հ. Գրքիկյան» ՍՊԸ-ի հետ կնքել ավտոմեքենաների անիվների մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ	_____	Գևորգ Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Գեղամ Գևորգյան
	_____	Արկադիկ Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Բաբկեն Աբրեյան